



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱԾԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Պատմվածքի ուսումնասիրման
առանձնահատկությունները տարրական դասարաններում, որպես
բանավոր խոսքի զարգացման միջոց

ԱՌԱՐԿԱ՝ <<ՄԱՅՐԵՆԻ>>

ՀԵՂԻՆԱԿ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆՈՐԱԾԵՆԻ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ <<ՊՈԱԿ>>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ -----4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ -----8

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ -----9

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ -----15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ -----19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----20

Պատմվածքի ուսումնասիրման
առանձնահատկությունները տարրական
դասարաններում, որպես բնավոր խոսքի զարգացման
միջոց:

Այն ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը:
Բլում

Ներածություն

Ես դասավանդում եմ չորրորդ դասարանում, որտեղ կան տարբեր
ընդունակություններ ունեցող աշակերտներ: Ընտրելով այս թեման, ես
ցանկանում եմ նորագույն մեթոդներով շտկել կարդացածը վերարտադրելու
դժվարությունները:

Իմ առջև դրված նպատակն է՝ Ձևավորել կարդացածը հասկանալու
կարողությունը: Հարստացնել բառապաշարը նոր ծանոթ
բառերով: Չարգացնել սովորողների մտածողությունը և երևակայությունը:

Ուսումնասիրելով ժամանակակից տեխնոլոգիաներն ու
մեթոդները, կարևորելով համագործակցային մեթոդները, ես
կարծում եմ, որ կհասնեմ ցանկալի և սպասված արդյունքի:

Գրական ակնարկ

Երբ որոշում ենք, թե ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշել, որ մեթոդը միայն միջոց է նպատակին հասնելու համար: Երբ ընտրում ենք որևէ ուսուցման մեթոդ, ապա այն պետք է լավագույնս օգնի աշակերտին հասկանալ նյութի բովանդակությունը և հեշտությամբ սովորի ու կիրառի: Արդյունավետ հարցեր տալը ամենակարևոր հմտություններից մեկն է, որ ուսուցիչը կարող է զարգացնել: Հարցերով կարող ենք աշակերտներին նախապատրաստել նոր նյութի հաղորդմանը: Ուսուցիչը պետք է հարցերը կազմի՝ մտքում ունենալով դասի նպատակը: Ճատ կարևոր է, որ ուսուցիչը հարցադրումից հետո ժամանակ տրամադրի մտածելու և պատասխանելու համար:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում այն չի գտել լայն տարածում: Համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է, կարևոր է տարբերել ավանդական, խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է:



Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

4

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի շրջանում: Այս խմբի անդամները աջակցում, օգնում են նպաստելով առաջադրանքի կատարմանը: Անդամները համագործակցում են ամեն օր՝ դասամիջոցին և դասի ընթացքում, օգնում միմյանց կատարել տնային առաջադրանքները: Համագործակցային ուսուցման ընդացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են իրենց աշակերտների միջոցով: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային մանկավարժության նպատակը այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսուցման գործընթացը վերածում են սոցիալական շքման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Անձի զարգացում և անհատականության ձևավորում
Սթրեսի հախթահարում
Առողջ փոխհարաբերությունների դրսևվորում

Համագործակցային ուսուցման տարրեր

Դրական փոխկախվածության ապահովում

Դեմ առ դեմ փոխազդեցություն
Խմբային գործընթացի մշակում
Ինտերակտիվ առաջադրանքի կատարում

Համագործակցային ուսուցման մեթոդի նպատակն այնպիսի
մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են
սոցիալական շփման:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝
Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու,
խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են
ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է
[հանդուրժողականության](#) և վստահության ձևավորմանը: Քննարկումներն
ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները
համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և
[ռեսուրսներ](#), մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են
[հետադարձ կապ](#), քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր
նպատակին հասնելու համար:

5

Անհատական [հաշվետվություն](#) և պատասխանատվություն. Խմբի
յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր
փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման
արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով
կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի
աշխատանքի արդյունքը: Սոցիալական հմտություններ. Խմբի
անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ
աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին
հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների,
փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ
կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են
սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների
գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:
Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց
փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային
ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները
հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդներ
Աշակերտների թիմային առաջադիմություն
[Խճանկար](#)

Շրջագայություն պատկերասրահում
Երեք բանալի և մեկ կողպեք
Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային

ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Յոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային [ուսուցման մեթոդ](#) է: Այն մշակվել և փորձարկվել է [Տեխասի A&M համալսարանում](#)՝ [Էլիոթ Արոնսոնի](#) և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

6

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն: Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Տարրական դասարաններում, որպես բանավոր խոսքի զարգացման միջոց կարելի է կիրառել Բլումի տաքսոնոմիան, որը մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների


հիպերխիկ դասակարգումն է:

Բլյումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական նպատակները կամ ավելի շուտ կրթական վերջնարդյունքները: Այն առաջարկվել է համանուն հեղինակի կողմից 1956 թվականին, նպատակ ունենալով բարելավելու առարկայական ծրագրերի և դրանց գնահատման, մասնավորապես քննությունների շուրջ դասավանդողների միջև փոխըմբռնումն ու հաղորդակցությունը:

Այն հիմնականում ներկայացվում է բուրգի տեսքով,ինչպես օրինակ՝ Մուսլոուի մարդու պահանջմունքների հիպերարխիան:Բլյումի տաքսոնոմիայի օգնությամբ հնարաոր է գտնել խզումը աշակերտների իրական և անհրաժեշտ գիտելիքների միջև, երևան հանելը այն,ինչ հարկավոր է սովորեն բարձր մտավոր ունակությունների ձերքբերման համար : Ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելուց և իրականացնելուց հետո աշակերտները ձեռք կբերեն նոր հմտություններ և կարողություններ:

Բլյումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական նպատակները: Ճատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բուրգի մակարդակի աստիճանաբար ապահովման ուղղությամբ:

Բլումի տարաբնույթի



<https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy>

https://hy.wikipedia.org/wiki/Համագործակցային_ուսուցում

Գործնական համատեքստ

Գործնական աշխատանքս իրականացրել եմ Արագածոտնի մարզի Արագած գյուղի թիվ 2 դպրոցում: Փորձարարական դասերս իրականացրել եմ իմ դասավանդած 4-րդ դասարանում:

Դասի պլան 1

Դասարան՝ 4

Դասվար՝ Սուսաննա Վարդանյան

Առարկա՝ «Մայրենի»

Թեմա՝ Հրաչյա Մաթևոսյան «Այ քեզ բան,ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում հայ-րե-նիք է» Դարձվածք

Դասի տիպը՝ հաղորդման դաս

Դասի նպատակը՝

Հասկանալով, արտահայտիչ ընթերցեն բնագիրը:

Կարողանա միմյանցից

տարբերել երկխոսության

մասնակիցներին:

Կարողանա հերոսների մասին տեղեկություններ

քաղել ընթերցածից:

Աշակերտները բնագրի դարձվածքներն ու

արտահայտությունները կհամապատասխանեցնեն

իրար՝ խորացնելով դարձվածքների մասին

գիտելիքները:

Դասի ընթացք՝

Խթանման փուլ՝ Ուսուցիչը նախապատրաստական զրույց է

անցկացնում աշակերտների հետ՝ նոր նյութի վերաբերյալ՝ փորձելով փակ

հարցերով նախապատրաստել և հասցնել ուսուցանվող դասի

գաղափարին:

Ուսուցիչ - Երեխանե՛ր, Հայաստանը ի՞նչ արժեք ունի մեզ համար: Ինչու՞ ենք

մենք այն այդքան սիրում: **Աշակերտներ**- Որովհետև Հայաստանը մեր

հայրենիքն, մենք ծնվել և ապրում ենք

այստեղ: **Ուսուցիչ**- Ինչու՞ է այն մեզ համար թանկ: Ինչու՞ ենք այն

պաշտպանում:

Աշակերտներ- Որովհետև առանց հայրենիքի մարդը չի կարող

ինքնություն ունենալ: Եթե մենք չպախշտպանենք մեր հայրենիքը, ապա

օտարը կգավթի մեր տարածքները:

Ուսուցիչ- Երեխանե՛ր, այսօր մենք ուսումնասիրելու ենք Հրաչյա

Մաթևոսյան՝ «Այ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հայ-րե-

նիք է» ստեղծագործությունը:



10

Իմաստի ընկալման փուլ՝ Ուսուցիչը ընթերցում է բնագիրը՝ հատված հատված: Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո, ուսուցիչը բացատրում է այդ հատվածի միտքը: Բնագիրն ընթերցելուց հետո ուսուցիչը բացատրում է **քապապուտեր, ծմակ, հուղակ, մաճկալ, աղուն** բառերի իմաստները:

Վերհիշելով, թե ինչ է դարձվածքը, ուսուցիչը աշակերտների հետ բնագրից դուրս է բերում՝ **հոր քթից թռած աչքներս չռված են**

լեզու թառ եմ տվել

ալավ բոցին տալ դարձվածքները:

ՈՒՏՈՒԳԻՋ-Երեխանե՛ր, ի՞նչ հասկացաք այս բնագրից:

Աշակերտներ-Այսօրվա մեր դասը հայրենիքի մասին է:

ՈՒՏՈՒԳԻՋ-Ովքե՞ր էին հերոսները:

Աշակերտներ-Չայր և որդի, որոնցից հայրը գնացել էր կռիվ և տուն էր վերադարձել, իսկ որդին նրան էր ապաստում;

ՈՒՏՈՒԳԻՋ-Երեխանե՛ր, եկեք միասին մտածենք, թե ո՞րն է մեր հայրենիքը և ինչպիսի՞ն է այն: Այնուհետև դասարանը բաժանվում է 3 խմբի: ՈՒՏՈՒԳԻՋը դասը բաժանում է 3 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս է դասի մեկ հատվածին համապատասխան հարցերը: Խումբը, պատասխանելով հարցերին, հավաքում է այդ հատվածի միտքը: Աշխատանքից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր հարցերի պատասխանը՝ ըստ խմբերի հերթականության և հավաքվում է ամբողջ պատմվածքի միտքը:

Կշռադատման փուլ՝ աշակերտները և ուսուցիչը միասին հարցուպատասխանի միջոցով ամփոփում է դասը: Տեսյին հանձնարարություն՝ առաջադրանք 1:

Փորձարարական

Դասի պլան 2

Դասարան՝ 4

Դասվար՝ Սուսաննա Վարդանյան

Առարկա՝ «Մաթեմատիկա»

Թեմա՝ «Ամփոփիչ և ամրապնդող առաջադրանքներ»

Դասի տիպը՝ ամրապնդման դաս

Դասի նպատակը՝

Առաջադրանքների միջոցով ամրապնդել գումարման և բազմապատկման զուգորդական և տեղափոխական հատկությունները: Կկարողանան անհայտ բաղադրիչով առաջադրանքներ կատարել ավելի արագ: Կզարգացնեն տեքստային խնդիրներ լուծելու հմտությունները:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ՝ Հին դասի ամփոփում, տնային աշխատանքի ստուգում: Անհասկանալի առաջադրանքների բացատրություն և ուսուցչի կողմից:

Իմաստի ընկալման փուլ՝ Նոր դասը <<Ամփոփիչ և ամրապնդող առաջադրանքներ>> թեման է: Աշակերտները միմյանց փոխարինելով կմտենան գրատախտակին և կկատարեն առաջադրանքների <<ա>> տարբերակները: Աշակերտները բանավոր կկատարեն առաջադրանքներ, որոնք կմարզեն աշակերտների մտածողությունն ու հիշողությունը:

Կշռադատման փուլ՝ Ամփոփում ենք առաջադրանքների «ա» տարբերակը, իսկ «բ» տարբերակը կլինի տնային առաջադրանք: Ակտիվ և ճշգրիտ հաշվարկներ կատարած աշակերտները գնահատվում են:

Փորձարարական

Դասի պլան 3

Դասարան՝ 4

Դասվար՝ Սուսաննա Վարդանյան

Առարկա՝ <<Ես և շրջակա աշխարհը>>

Դասի նպատակը՝

Իմանա, թե ինչ է չափման մեծությունը և չափման միավորը:

Կկարողանան իրենք կատարել չափումներ և կատարել

տվյալների գրանցում: Քայլ 1. Դասի սկիզբ՝

Խթանում

Ուսուցիչը նախ կճշտի, թե ի՞նչ չափման մեծություններ գիտեն: Կարևոր է իմանալ չափման մեծությունների մասին, որպեսզի կատարեն չափումներ:



13

Քայլ 2. Նոր նյութի ներկայացում

Ուսուցիչը ընթերցում է դասը, տալիս բացատրություններ՝

օգտվելով դասի 28 նկարից: Քայլ 3. Ուղղորդված

գործնական աշխատանք

Աշակերտները կկատարեն գործնական աշխատանք, պատրաստել պաստառ՝ «Չափման միավորներ» թեմայով: Դասարանը բաժանել 2

իմբի և պատրաստել պաստառ:

Քայլ 4. Ինքնուրույն աշխատանք/իմաստավորում

Գրքում գրված առաջադրանք 1-ը կկատարեն

յուրաքանչյուրը իրենց տետրում: Քայլ 5. Դասի

ավարտ/ կշռադատում

Ուսուցիչը աշակերտների հետ ամփոփում է դասը: Կրկնում նոր սովորած մեծությունների անունները: Տնային առաջադրանք՝ վարժ. 2:

14

Վերլուծություն 1

Իմ առաջին փորձարարական դասը <<Մայրենի>> առարկայից էր, որը անցկացրել եմ իմ դասավանդած 4_րդ դասարանում: Դասաժամի ընթացքում պլանավորված դասը ամբողջությամբ իրականացրել եմ առանց բացթողումների: Այն ինչ գրի եմ առել դասի պլանում՝ ամբողջությամբ իրականացրել եմ աշակերտներիս օգնությամբ:

Դասապրոցեսի դրական կողմն այն էր, որ հասա իմ նպատակին, այն է՝ պատմվածքի բովանդակության յուրացումը աշակերտների կողմից:

Բացասական կողմը, որ կարելի էր հրավիրել մեթոդիավորման նախագահին և ուսումնական գծով տեղակալին, որը չեմ արել:

Վերլուծություն 2

Փորձարարական դաս 2-ը իրականացրել են «մաթեմատիկա» առարկայից, իմ դասավանդած 4-րդ դասարանում:

Դրական կողմերը`

1. բոլոր աշակերտները ներգրավված էին դասապրոցեսի մեջ:
2. հաշվի էի առել բոլորի ընդունակությունները, ինչն էլ թույլ տվեց առաջադրանքները կատարել բոլորի կողմից:

Բացասական կողմերը`

1. ժամանակի սղությունը:
2. առաջադրանքները շատ էր ներառված:

Վերլուծություն 3

Փորձարարական դաս 3-ը անցկացրել եմ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից՝ իմ դասավանդած 4-րդ դասարանում:

Քանի որ, աշակերտներս <<Մաթեմատիկա>> առարկայից արդեն ծանոթ էին չափման միավորներին, դասը ավելի հեշտ և սահուն իրականացավ: Կատարեցինք խմբային և անհատական աշխատանքներ, որը շատ լավ իրականացրեցին աշակերտներս:

Դրական կողմը այն էր, որ դասը յուրացրեցին բոլոր աշակերտները:

Բացասականը այն էր, որ խմբային աշխատանքի համար քիչ ժամանակ էի

տրամադրել:

Եզրակացություն

Փորձարարական դասերս իրականացրել եմ իմ դասավանդած 4-րդ դասարանում, և այդ գործընթացից ես հասկացա ժամանակի ճիշտ տնօրինում կախված է ոչ միայն արդյունավետ պլանավորումից, այլև դասի հետագա ընթացքից: Այս փորձարկումների ժամանակ ես հասանում եմ, որ դասարանիս բոլոր աշակերտները ներգրավվեցին դասապրոցեսի մեջ: Եվ որ ամենակարևորն է, ես փորձեցի իմ առջև դրված նպատակիս հասնել, և գրեթե ունեցա իմ ցանկալի արդյունքը: Գրեթե քանի որ ժամանակը շատ կարճ էր, որպեսզի այն ինչ պլանավորել էի, ամբողջությամբ իրականացնեի: Երկար ժամանակամիջոցի դեպքում կունենայի առավել դրական արդյունք:

https://hy.wikipedia.org/wiki/Յամագործակցային_ուսուցում

<https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy> Ուսուցման
ժամանակակից մեթոդների կիրառումը- <<Գյուլմրի>> 2006թ.